

ԳԱՂԹԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

ԱԼԻՔԵԱՆԻ

(նւէր Ա.Մերիկա գաղթողներին)

Պատրաստուում էին մեր բոլոր գիւղեր
Ձրւել գաղթելու հեռաւոր կողմեր.
Ես էլ զբաղւած միւսների նման՝
Վերջացնում էի գործեր զանազան,
Մեծ ճանապարհի համար հարկաւոր
Հաւաքում էի սարք ու կարգ բոլոր:

Բայց շատ էր ցաւում իմ սիրտ ու հոգին
Եւ ուրախ չէի ես իմ արածին...
Ինչպէս ես թողնեմ իմ ապրած տեղեր,
Ինչպէս մոռանամ մեր ձոր ու սարեր.
Տանջւում էի խիստ ցերեկ և գիշեր
Ողբում լալազին մեր բողբ, մեր օրեր:

Ձերմ համբոյր տալով երկրիս պապական՝
Ես հարցնում էի ինքս ինձ շատ անգամ.
Գաղթեմ հեռուներ թէ նստած մնամ,
Ինչպէս այս ցաւին անեմ լաւ դարման.
Տանեմ զրկանքներ իմ բնիկ երկրում,
Թէ հանգիստ ապրեմ խաղաղ աշխարհում:

Վերջին օր գնացի մեր հանգստարան,
Ուր թաղւած էին հայր, մայր, ազգական.
Գերեզմանների առաջ չօքեցի
Եւ արտասուքով նոցա գոչեցի. —

Մի ելք ցոյց տրուէք, ո՛վ փորձած ծերեր,
Երազ-տեսիլում տրուէք խորհուրդներ:

Եւ երազ եկաւ, երազ սարսեցնող,
Որ միշտ լիշելիս ազգում է ինձ դող.
Երևաց ծերուկ իմ հայրը սգուր
Եւ ասաց ահեղ ձայնով զօրաւոր.
«Մի թող դու, որդի, քո ծնած տեղեր,
Որ կեանք են տւել մեզ ամբողջ դարեր:

Ցաւ ու տառապանք մենք էլ ենք տեսել,
Անգութ տանջանքից հալումաշ եղել.
Այդ ո՛վ է կարող համարձակ ասել՝
Թէ լաւ վախճանի կարող էք հասնել.
Ո՞վ է մեր կեանքի զաղտնիքն իմանում,
Հեռու ապագան ուղիղ գուշակում»:

Ջարթնեցի իսկոյն սաստիկ սարսափած,
Մնացի ինքս ինձ՝ իսպառ շարած.
Տեսնում եմ կնկաս չոքած աղօթում,
Մեր տան պատերը լիզում համբուրում.
«Չ'գնանք, սիրելիս», ասացի նորան.
Իսկ նա չը տըլաւ ո՛չ մի պատասխան:

Արդէն ուշ էր շատ և միայն իզուր
Մեր ցաւած սրտեր խոցում էինք սուր.—
Ժամանակ չ'կայ, անցնում է գիշեր,
Պէտք է վերկենալ, պատրաստել սալլեր...
Աչքերս պղտորած, գլուխս տրաքում,
Ինքս էլ չ'գիտեմ թէ ինչ եմ անում...

Գիւղում զարթնեցին, սալլեր ճռուացին,
Գոռում զսչումներ օգը թնդացրին.
Ջերմ համբուրեցի մեր որբ խեղճ տնակ,
Իմ ձեռքը առի զաղթական մահակ.
Պատրաստ էինք մենք. սալլերս հանեցինք՝
Եւ նշանակած տեղը քշեցինք: